Քննարկվել և հավանության է
արժանացել մանկավարժական
խորհրդի
«08» 04 2021 թ. № 9 նիստում

Հաստատված է
«Չարենցավանի պետական
քոլեջ» ՊՈԱԿ-ի խորհրդի
«04» 05 2021 թ. №3-21 նիստում

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
Ա.Նաղդալյան

«ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»ՊՈԱԿ-Ի

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1.Ուսանող է համարվում այն անձը, ով տնօրենի հրամանով ընդունվել է քոլեջ որպես սովորող :

1.2.Ուսանողի վարքագծի կանոնները բարոյականության համընդհանուր սկզբունքների վրա հիմնված և ուսումնական հաստատությունների առանձնահատկությունների հաշվառմամբ վարվելակերպի և փոխահարաբերությունների առանձնահատկությունները սահմանող նորմեր են:

2. Քոլեջի սովորողի պարտականությունները

2.1 Կատարել կրթական ծրագրերի պահանջները՝ հաճախել պարտադիր ուսումնական պարապմունքներին, կատարել ուսումնական պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները:

2.2 Կատարել ՀՀ օրենսդրության, քոլեջի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների բոլոր պահանջները:

2.3 Ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում հանձնել բոլոր ստուգարքներն ու քննությունները:

2.4 Հոգատարությամբ վերաբերվել քոլեջի գույքին, պատճառած վնասի համար կրել նյութական պատասխանատվություն:

2.5 Բարձր պահել քոլեջի պատիվն ու հեղինակությունը:

2.6 Լինել կարգապահ, քոլեջի շենքում և շրջակայքում պահպանել մաքրություն:

2.7 Վճարովի համակարգում սովորող ուսանողը պետք է կատարի վարձավճարի վճարում կիսամյակի ընթացքում,եթե փոխադարձ համաձայնությամբ այլ ժամկետներ չեն սահմանված,հակառակ դեպքում՝ սահմանված ժամկետում ուսման վարձը չմուծելու պատճառով ուսանողը ազատվում է քոլեջից

2.8 Հարգելի պատճառով պարապմունքներին չներկայանալու դեպքում սովորողը պարտավոր է հաջորդ իսկ օրը տեղյակ պահել , իսկ ներկայանալու առաջին իսկ օրը տվյալներ ներկայացնել պարապմունքներին չմասնակցելու պատճառների մասին: Եթե վերոնշյալ բացակայությունների թիվը 120-180 դասաժամ է,ապա քոլեջի մանկավարժական խորհրդի որոշմամբ ուսանողին տրվում է հնարավորություն՝ վերաքննություն հանձնել ուսումնական պլանով նախատեսված առարկաներից(մոդուլներից):

2.9 6 աշխատանքային օր անընդմեջ կամ ամսվա մեջ ավելի քան 10 օր չհաճախած ուսանողների տվյալները կմուտքագրվեն <<Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման>> էլեկտրոնային ենթահամակարգ՝ այդ սովորողների կարգավիճակը համապատասխան մարմինների կողմից ճշտելու նպատակով:

2.10 180-ից ավելի դասաժամ բացակայությունների դեպքում ուսանողը հեռացվում է քոլեջից:

2.11 Լինել հարգալից և բարեկիրթ ուսանող-ընկերների, դասախոսների և քոլեջի ղեկավարության նկատմամբ:

2.12 Պատշաճ հագուստով և արտաքինով ներկայանալ քոլեջ:

2.13Պահպանել բարոյական այլ նորմերի պահանջները:

3. Քոլեջի ուսանողի վարքագիծը լսարանում

3.1.Ուսումնական պարապմունքների սկիզբ է համարվում ժամը 9 30 : 10 րոպեից ավել ուշանալու դեպքում դասախոսը իրավունք ունի չթույլատրել ուսանողին մասնակցելու դասին:

3.2.Ուսումնական պարապմունքների բնականոն ընթացքը չխաթարելու համար պարապմունքների սկսվելուց հետո պետք է շենքում ապահովվի լռություն և կարգապահություն: Չի թույլատրվում ընդհատել պարապմունքները, դրանց անցկացման ժամանակ մտնել լսարան և դուրս գալ լսարանից

3.3.Լսարաններում դասընթացի ժամանակ արգելվում է բջջային հեռախոսների կամ ժամանակակից կապի այլ միջոցների օգտագործումը, բացառությամբ՝ ուսումնական նպատակներով նման միջոցների օգտագործման անհրաժեշտության:

4. Քոլեջի շենքում արգելվում է՝

- գույքը վնասել
- ծխել
- ալկոհոլային խմիչքներ օգտագործել
- ալկոհոլային կամ այլ հարբածության վիճակով ներկայանալ, կամ դասերին մասնակցել
- թղթախաղով զբաղվել
- առանց վարչակազմի թույլտվության տեղաշարժել գույքը
- պատերի վրա դաջվածքներ կատարել

• սպորտային հագուստով ներկայանալ

5. Վարքագծի կանոնները խախտելու դեպքում տույժերի կիրառումը

5.1.Սովորողների կողմից ՀՀ օրենսդրությամբ, քոլեջի կանոնադրությամբ նախատեսված պարտականությունների, ներքին կարգապահության կանոնների և սույն վարքագծի կանոնների խախտման դեպքում նրա նկատմամբ կիրառվում են հետևալ կարգապահական տույժերը.

• նկատողություն

• խիստ նկատողություն

• հեռացում քոլեջից

5.2.Կիրառված կարգապահական տույժերի մասին տեղեկացվում է ուսանողներին:

5.3.Մինչև կարգապահական տույժի կիրառումը ուսանողից պահանջվում է գրավոր բացատրություն:

5.4.Կարգապահական տույժը կարող է կիրառվել արարքի բացահայտումից ոչ ուշ, քան մեկ ամսվա և կատարումից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում չհաշված ուսանողի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածը: Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո մեկ ուսումնական տարվա ընթացքում չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա դա համարվում է մարված:

6. Ուսանողների խրախուսումը

Քոլեջի հասարակական կյանքում ակտիվ մասնակցության և կրթության ոլորտում հատուկ հաջողությունների դեպքում, ուսանողների համար նախատեսվում են խրախուսման հետևյալ ձևերը.

- Շնորհակալագրեր
- Դիպլոմներով պարգևատրում
- Գումարային պարգևատրում
- Ներքոլեջային կրթաթոշակի տրամադրում
- Հուշանվերներով պարգևատրում
- Նախկինում ստացած նկատողության հանում